

փոխ երկրի: Պաշտամունքի իր իղձը աւելի շուտ դէպի բնութիւնն է ուղղած, քան թէ իր սիրուհուն կնոջ հմայիչ ձևերի մէջ նա տեսնում է էմբլեման մելամաղձու լճերով, գեղանըկար լեռնաշղթաներով, աստղազարդ գիշերներով իր երկրի: Նա կարծէք աշխատում է ընդգրկել աւելի շուտ իր մայրենի հողը, քան թրթուն մարմինը սիրուհու, որի մէջ նա ամփոփում է երևակայութեամբ իր հայրենիքը»: Այսպէս է գնահատում և հասկանում ականաւոր Փրանսիացին՝ մի օտար մարդ՝ հայ ժողովրդական երգերը: Ի՞նչքան և միսիթարական լինի այդ գնահատութիւնը, քայլ երբ ակամայ հակադրում ենք այն մեր ժամանակակից և օտարամոլ սերնդի վերաբերմունքին դէպի մեր ազգային մտաւոր գանձերը, դէպի մեր լեզուն, մեր տքնող, ստեղծագործող և յուսացող ժողովուրդը, վհատեցուցիչ խոհերից խուսափել անկարելի է դառնում: Ահա մի գիրք, որ ձեռք բըռնած առանց ամաչելու կարելի է ներկայանալ օտարին և ասել հպարտութեամբ: «Ես հայ եմ»: Ազգի հոգեւոր կեանքը կրծող մեր ժանիքաւոր կրամօպլիտները, որոնք սիրում են շաղակրատել աշխարհի բոլոր լեզուներով բացի իրանց սեփականից, լաւ կը լինի, որ գէթ մի անգամ թերթեն այս գիրքը: Դա ոչ վտանգաւոր է նրանց գեղասիրական ճաշակի համար և ոչ էլ ստորացուցիչ քանի որ գիրքը զրուած է ոչ հայերէն, այլ ֆրանսերէն: Ով գիտէ, գուցէ և ընթերցումից յետոյ չ'ամաչեն ասել, թէ մենք էլ ծնունդ ենք այն ժողովրդի, «որի ստեղծագործող հանձարը, —ինչպէս ասում է Պոլ Ադան, —արտայայտուել է բոլոր գեղեցիկ արուեստների մէջ»:

Ա. Ա.

«Աղջագրական Հանդիս»-ի 1—X գրքերը<sup>1)</sup>:

Մի կողմ թողնելով հայկական ընտանիքի կազմութեան վերաբերեալ պ. Լալայեանի ուսումնասիրութիւններն ու եղբակացութիւնները, որոնց գուցէ վերադառնանք մի այլ անգամ, այժմ անցնենք «Հանդիս»-ի միւս նիւթերին:

1. «Բուլանըին գաւառը<sup>2)</sup>» Բենսէի. — Այս խիստ հետաքրքրական աշխատութիւնը բռնում է 278 երես: Պատմական մասը շատ թոյլ է և յենուած Հայկի առասպելի վրայ: «Բուլանըին» մէջ ոչինչ չկայ արուեստական, ամեն բան բնական, պարզ, խօսուն է. այնտեղ կարծես կենդանի ժողովուրդն է

<sup>1)</sup> Տե՛ս «Մուգճ», № 3.

<sup>2)</sup> V և VI գիրք:

կանգնած առաջդ, որ քեզ հետ խօսում է իր սովորութիւններից, իր բարքերից ևայլն:

Բենսէ տեղ-տեղ ակնարկներ անելով զանազան հէքիաթ-ների մասին՝ դժբախտաբար չի առաջ բերում ու առհասարակ ժողովրդական բանահիւսութեան բոլոր մնացորդները չի տալիս, իսկ թւում է, թէ այդպիսի անսարատ մնացած ժողովրդի մէջ պէտք է բանահիւսութեան գեղեցիկ զանձեր պահուած լինին. սակայն այն, ինչ որ նա տալիս է Բուլանըսի բարքառով, լիովին բաւական են պարզելու այդ բարբառի հնչիւնաբանութիւնը և առանձնայատկութիւնները:

2. Հայ գեղջուկի ալքումը<sup>1)</sup> Յ. Մալիսասեանի.—Դա ուշադրութեան արժանի մի աշխատութիւն է, որ տալիս է զիւղական առտնին կեանքի համարեա բոլոր մանրամասնութիւնները: Աշխատութեանը կցուած են ամանեղինի ու գործիքների պատկերներ, որոնք մարդաբանական և կուլտուրայի պատմութեան ուսումնասիրութիւնների համար կարեոր առաւելութիւններ են: Մեզ թւում է թէ վերնագիրն անածող է: Եթէ չենք սիալում, այդ մասում թէ պ. Մալիսասեանի և թէ այլոց համար ուղեցոյց է եղել տարիներ առաջ Մեսրոպ վ. Տէր-Մովսիսեանի «Հայ գիւղացու տունը<sup>2)</sup>» մարդաբանական աշխատութիւնը:

3. Հայր Նժդիհեանի Ալաշկերտի բանաւոր զրականութեան հաւաքածուն<sup>3)</sup> դժբախտաբար լրիւ չէ: Զկան հէքիաթներ, աւանդութիւններ, դիւցաներգութիւնների մնացորդներ ևայլն, որոնց կարևորութիւնը հարկ չկայ ապացուցանելու. այնուամենայնիւ, չնայելով դրան տուած նիւթը շատ առատ է և հետաքրքրական: Առածների բաժնի մասին հարկ ենք համարում ասել, որ իր մէջ պարունակում է մեծագոյն մասն այն առածների, որ մեր մէջ ընդհանուր է և ոչ միայն այդ գաւառին յատուկ: Հետաքրքրական են նաև նրանց մասին տուած քացատրութիւնները: Հայր Նժդիհեանն, ինչպէս նրա գործը ցոյց է տալիս, գիտէ «բարի հասկերը որոմներից ջոկել», ուստի լաւ կը լինէր, եթէ Ալաշկերտի ժողովրդական բանահիւսութեան մնացորդները բոլորը գրի առնէր և աշխատէր առհասարակ այդ գաւառի ամբողջ ազգագրութիւնը տալ.

4. Շիրակի ժողովրդական երգեր<sup>4)</sup> Մ. Խանակեանի.

<sup>1)</sup> III և VI գիրք:

<sup>2)</sup> Հ. Մեսրոպի այդ աշխատութիւնը ապուել է նախ գերմաններէն և ապա Վեննայում Միիթար. տպարանում 1894 թ. հայերէն:

<sup>3)</sup> V և VII—VIII գիրք:

<sup>4)</sup> V գիրք:

—Այդ երգերը նոյնիսկ աւելորդ էի համարում ինկատ առնել, որովհետև նրանք շատ քիչ բան են պարունակում Շիրակի երգերից, և երկրորդ ըստ մեծի մասին սարքովի, թերևա իրա հաւաքողի անուան տակ թազնուողի գործ, բայց ոչ երբէք ժողովրդական ստեղծագործութիւն, և նրա բերանում երգուող:

5. Համշէնցի հայեր<sup>1)</sup> Յ. Մուրադեանի.—Սա մի մանրամասն աղջագըռութիւն է Սև Ծովի արևելեան ափերն ապաստանած տաճկահայերի (տրավիզոնցի), որոնք ընդհանուր առմասը համշէնցի են կոչւում: Մանրամասն տուած են նրանց դրութեան, սովորութիւնների, սնոտիապաշտութիւնների և այլն նկարագիրները, թէև ոչ բոլորովին լրիւ.—Նախնի ընտանիքի սեփականութեան և իրաւական յարաբերութիւնների զանազան կողմերը, ինչպէս և հողատիրական սովորութիւններն և այլն չեն պարզուած: Զկան ժողովրդական բանահիւսութեան թէկուզ նըմուշներ, որի պատճառով և համշէնցիների բարբառի ուսումնասիրութեան համար և ոչ մի նիւթ:

6. «Թլւատ Դաւիթ»<sup>2)</sup> եւ «Սասնայ ծոեր» Ա. Աքեղեանի.—Երկուան էլ նոյն դիւցազներգութեան զանազան վարիանտներ են: Վերջինս նաև այն հետաքրքրութիւնն ունի, որ զրի է առնուած մի զաւառաբարբառով, որ ցարդ չեղած նորութիւն է: Դաւթի և Մհերի դիւցազներգութիւնը նորութիւն չէ հայ-աղջագըռութեան համար, սակայն առաջ բերուած օրինակները գնահատելի են այդ դիւցազներգութեան ամբողջութիւնը վերականգնելու համար: Ժողովրդական այդ վէպը դեռ համեմատական քննադատութեան և ուսումնասիրութեան չէ ենթարկուել ըստ արժանաւոյն, ուստի և դեռ շուտ է նրան զուտ հայ-ժողովրդական դիւցազներգութիւն անուանել:

7. Ռոստամ-Զալ<sup>3)</sup> Գ. վ. Յովսէփեանի.—Հայ-աղջագըռական նիւթերի մէջ ուշադրութեան արժանի նորութիւն է իրանեան դիւցազներգութեան այդ վարիանտը: Ապագայ ուսումնասիրով գուցէ կապ գտնի Դաւթի և Մհերի դիւցազներգութեան ու Ռոստամ-Զալի վէպի մէջ:

8. Հաւաքածոյ Պոլսոյ ուամկական անզիր (բանաւոր) գրականութեան<sup>4)</sup> Հ. եւ Ա. Աճառեանի.—Սա մի առատ նիւթ է ուամկական բանահիւսութեան մասցորդների ի մի հաւաքած,

<sup>1)</sup> IV և V գիրք:

<sup>2)</sup> VI և VII—VIII գիրք:

<sup>3)</sup> VII—VIII գիրք:

<sup>4)</sup> IX գիրք:

որի մէջ սակայն պակասում են հէքիաթներ, աւանդութիւններ, առասպեկտներ ևայլն:

9. Քաջբերունու «Հայկական սովորութիւնները» <sup>1)</sup> հետաքրքրական են նաև այն կողմից, որ առաջին անգամ զանազան գաւառների մի շարք սովորութիւններ և երգեր իրար են հիւսոււած համապատասխան ցուցումներով՝ նիւթին հմուտ բանահաւաքի ձեռքով:

10 Նոր-Շախիջեւանն ու Նոր-Նախիջեւանցիք <sup>2)</sup> Ե. Շահազիզի.—Այս յօդուածը մեզ հետաքրքրում էր այն տեսակչտից, որ սրանից դարեր առաջ բռն երկրից հեռացած հայկական այս հատածի սովորութիւններն ու հաւատալիքները և առնասարակ ամբողջ (համեմատաբար) ազգագրութիւնը, որքան ինձ յայտնի է, առաջին անգամն է տրում, ու աւելորդ է ասել, թէ համեմատական ուսումնասիրութեան համար որքան շահեկան կարող էր լինել դա:

Յօդուածը բռնում է 184 երես, որից ազգագրական նիւթերը 83 երեսի չափ: 46 երես նուիրուած է գաղթականութեան պատմութեանը, որ նորութիւն չէ ու ազգագրութեան չի վերաբերում: 30 երես բռնում է եկեղեցիների և մի վանքի նկարագրութիւնը, որ դարձեալ ազգագրութեան չի վերաբերում: Դըրանց մէջ նալբանդեանի և Պատկանեանի աների և իրանց նըկարները, որ նիւթի հետ և ոչ մի կապ չունին, նորերս մեռած մի եպիսկոպոսի տապանագիրը, նալբանդեանի գերեզմանը, Պատկանեանի կարինեալը, որոնք գուցէ պէտքական են մի այլ տեղ, բայց ազգագրութեան հետ ոչ մի առընչութիւն չունին: Մնացած 25 երեսը պ. Շահազիզը նուիրել է «Նախիջեւանցոց արդի կացութիւնը և առողին կեանքը» բաժնին: Մենք դիտողութեան կ'առնենք ազգագրական նիւթերն (25 երես) և այդ վերջն բաժինը (25 երես):

ա. Պ. Շահազիզը խօսելով գաղթականների թուր (12,598) մասին՝ ասում է, որ այդ թիւը «մօտաւորապէս կրկնապատկուել և եռապատկուել է: Եթէ մօտաւորապէս է կրկնապատկուել, ասել է եռապատկուելուց շատ է պակաս, եթէ եռապատկուել է, ասել է կրկնապատկուելուց շատ է աւել. իսկ տուած յաջորդ աղիւսակն ու թուերը ցոյց են տալիս, որ գաղթականների թիւը 30,000-ի է հասնում, որ եռապատկուելուց բիչ է 800-ով: Այսպիսով չափազանցութիւններն անտեղի են լուրջ նիւթերի մէջ և ոչ ներելի:

<sup>1)</sup> VII—VIII և IX գիրք:

<sup>2)</sup> VII VIII և IX գիրք:

բ. Խօսելով 15 տուն գիւղացիների քաղաքացոց հետ միաժամանակ քաղաքում ընակուելու մասին, ասում է, որ նրանք թէկ մոռացել են գիւղացիութիւնը, թէկ ընտելացել են քաղաքի կեանքին, նիստ ու կացին, թէկ նրանք քաղաքացիների նման արհեստներով և վաճառականութեամբ էին պարապում, այնուամենայնիւ քաղաքացի չեն կարողացել դառնալ, չեն ձուլուել: Այդ բոլորից յետոյ չեմ իմանում թէ էլ ի՞նչ է մնում, որ դրանք քաղաքացի հաշուուին, երբ մօտ 90 տարի քաղաքումն են ապրել. իսկ մի մարդու համար կարծեմ բաւական է, որ քաղաքում ծնուի և մեծանայ, որ նրան քաղաքացի ասենք՝ թէկ պաշտօնապէս նա քաղաքացի չհաշուուի էլ:

գ. Խօսելով սովորութիւնների մասին՝ պնդում է, որ նրանք ցյար և նման են բուն երկրի սովորութիւններին և այդպիսի սովորութիւններից բերում է 1) Տօն կատարելը՝ իր երկար ու բարակ նկարագրութեամբ, որ հայկական սովորութիւն չէ, այլ այլազգիներից մեզ անցած: Այդ նորամուտ սովորութիւնը տարածուած է Ռուսաստանի հայերի մէջ, որ սկսել է մուտ գործել նաև Կովկասում—քաղաքներում: Միծաղելին և մեր ասածն ապացուցանողն այն է, որ նոյնիսկ Թիֆլիսում հայ օրացոյցի երես չտեսնող հայերը, նամանաւանդ կանայք, իրանց տօնը կատարում են օտար օրացոյցների հաշուուվ: 2) Օրհնած ճիւղով մէջքին խփելը, որ մէջքը ամուր լինի, որ դարձեալ այլազգիների սովորութիւն է, բուն երկրում չկայ, այլ նախիջևանում ու թերևս ուրիշ գաղութներում:

դ. Նկարագրելով հարսանեաց ծէսն՝ ասում է. «Նորապսակ զոյգի ոտքերի տակ եկեղեցուց դուրս գալու ժամանակ դնում են մի աման, որ հարսն ու փեսան աշխատում են միմիանց առաջը տալ ու կոտրել, որովհետև այնպիսի հասկացողութիւն կայ, թէ ով որ առաջինը կանխէր կոխել ու կոտրել ամանը, նա էլ տան մէջ գլխաւորապէս իշխողը, հրամայողը կը լինի»: Եթէ արդպէս են բացատրում ուսւ ազգագրուները, այդ չի նշանակում, որ մեր մէջն էլ նոյն բացատրութիւնն ունի, կամ թէ դա ճշմարիտ բացատրութիւն է, որից օգտուել է նաև պ. Շահազիդ, առանց ասելու, որ այդպէս է բացատրում նրանց մէջ, ինչպէս ամենքին էլ յայտնի է, աման կոտրելու սովորութիւնը շատ հին է ու տարածուած: Մեր հայերիս մէջ աման կոտրելու հետ կապուած է չարը խափանելու նախապաշարումը: Դեռ այսօր էլ թէ նոր-նախիջևանում և թէ ամեն տեղ մեր մէջ, երբ առհասարակ որևէ աման է ընկնում ջարդում, ասում են թէ «չարը մարաւ», «չարը խափանաւ», «նափաւը անցաւ» և այլն և այլն. և եթէ այդպիսի գէպը իրար վրայ

երեք հատ պատահի, դա արդէն ամենապահով ապացոյցն է, որ չարն արդէն խափանուել, անցել է: Նոյն է և հարսի ու փեսայի աման կոտրելը: Որոշ տեղեր կան, ուր միայն կարող են չարերը խփել, այդպիսի տեղերից մէկն է և դրսի դրան շեմքը: Նորապսակներն այդտեղ աման կոտրելով խափանում են չարը, նրան բաժին տալով կոտրած ամանը, որ իր կոտրուելով տանում է նորապսակների չարը: Նոյն միտքն ունի և «չարդ տարաւ», «չարդ տանիմ» խօսքերը: Որից պարզ է, որ այդ նախապաշարման մէջ իրար վրայ և առհասարակ իշխելու և ոչ մի հետք չկայ:

Մի այլ տովորութիւն կայ մեր մէջ, ցարդ մեր ազգագրող-ներին անծանօթ, որ իր մէջ պարունակում է այդ իշխելու և հնազանդելու միտքը: — Երբ պսակի գլխաւոր խորհուրդն է կատարում, հարսն ու փեսան աշխատում են իրարից առաջ աջ ու տը դնել միւսի ոտի վրայ, և ով առաջ արաւ այդ բանը, (իբր թէ) նա էլ իր խօսքը միշտ առաջ պիտի տանի տան մէջ, իսկ միւսը պարտաւոր է հնազանդել:

ե. Պ. Շահապիզին անծանօթ է այն բանը, որ բուն երկրում մատաղ են բերում նաև աղաւնի և աքաղաղ, և որ վերջինիս մատաղ բերելը ս. Յակոբայ տօնի հետ և ոչ մի կապ չունի:

զ. Որովհետեւ Նախիջևանում սիրահարական երգեր չկան, ուստի և եղրակացութիւնը պատրաստ է: — այնտեղ մարդիկ ամուսնանում են հաշուով, իսկ առանձնապէս քաղաքում ոչ մի բանի չեն նայում, ոչ տեսքին ու գեղեցկութեանը և մինչև իսկ «ընութքն ու մեարիֆէթը», գիտութիւնն ու կրթութիւնը բանի տեղ չեն դնում: Եթէ այդ բոլորը հետկեցնում է նրանից, որ սիրահարական երգեր չկան, դրա համար կ'ասենք, որ քաղաք-ները ժողովրդական երգեր չունին, որոնց առաջ գալու համար հարկաւոր պայմանները չկան այնտեղ, ինչպէս գիւղերում: բացի դրանից, առհասարակ գաղթականները զուրկ են ժողովրդական բանահիւառութիւնից՝ յայտնի պատճառներով:

11. Հայ-ըռշաներ<sup>1)</sup> Վ. Փափագեանի: — Սա մի հետաքըրք-քրական աշխատութիւն է բոշաների կեանքի՝ մարդաբանական և ազգագրական տեղեկութիւններով, որ չի կարելի ասել թէ բոլորովին լրիւ են:

12. Գոշայ վանք<sup>2)</sup> Ի. Յարութիւնեանի: — Մի անգամ արդէն ասել ենք, որ համանման նիւթերն ազգագրութեան չեն

<sup>1)</sup> IV գիրք, 203—275 երես:

<sup>2)</sup> X գիրք, 5—38 երես:

վերաբերում, այլ հնագիտութեան: Յօդուածն անկախ դրանից հետաքրքրական է իր բովանդակութեամբ:

13. Արեան վրէժ եւ փրկանը<sup>1)</sup> յու. Մամուչեանի.—Սա մի փորձ է վրիժառութեան և փրկանքի սովորութեան ուսումնասիրութեան: Վրիժառութեան և ոչ արեան վրէժի եմ ասում, որովհետև ընդհանրապէս բերած օրինակներն ու կտորները այդ անունն են թոյլ տալիս գործածել յօդուածի համար: Յօդուածը հետաքրքրական է իր արծարծած խնդրի—«արեան վրէժի և փրկանքի» տեսակէաից, որ հեղինակը լիովին չէ պարզել: Որքան մենք յիշում ենք պ. Մամուչեան առաջինն է, որ արծարծում է այդ խնդրիը. ցանկալի է որ այդ խնդրի մասին նաև նիւթեր հաւաքուէին՝ ապագայ աւելի լայն ուսումնասիրութեանց համար:

Մնացած մանր յօդուածները թողնում ենք, որովհետև նրանք առանձին մեծ արժէք չունին: Ահա սրանով մենք վերջացնում ենք և այս բաժինը, մեզ մնում է խօսել թարգմանական աշխատութիւնների մասին՝ Հանդիսի մարդաբանական բաժնում:

Հանդիսի թարգմանական մասում կան հետևեալ հեղինակութիւնները. 1) Պրոֆ. Պետրիի՝ Մարդաբանութեան պատմ. գարգացումը. 2) Շ. Լետուրնօի՝ Ամուսնութեան զարգացումը. 3) Գ. Կանսատրինի՝ Մարդաբանութիւն. 4) Պօզադայի՝ Նորագոյն տեսութիւնները գերդաստանի, հասարակութեան և պետութեան ծագման մասին. և 5) պր. Ռատցելի՝ Տարերք ազգագրութեան: Մնացածներից հետաքրքրական է Ռ. Վիրխովի «Կովկասի տեղը քաղաքակրթութեան պատմութեան մէջ» յօդուածը:

Հասարակական գիտութիւնները, որի մէջ և Մարդաբանութիւնը, այնքան առաջ են գնացել, որ ոչ միայն նրաառանձին-առանձին ճիւղերը, այլև նոյնիսկ առանձին խնդիրները—հարցերը իրանց ետևում ունին ահազին գրականութիւն: Հայ ընթերցողներին առաջ թարգմանօրէն եւրոպական հեղինակներից մասնաւորապէս մարդաբանութեան և ազգագրութեան նիւթերի շարադրութիւններ՝ շատ գովելի է, սակայն ոչ «Ազգագրական Հանդիսի» գործ, որի համար դա մի ծանր բեռն է:

Հանդիսի խմբագրութիւնն այդ թարգմանութիւնները տալիս որոշ ծրագրի չէ հետևել:

Վերջացնելով մեր այս նկատողութիւնները՝ պէտք է առնենք, որ չնայելով իր բազմաթիւ պակասութիւններին, «Ազգագրական Հանդիսը» հայոց գրականութեան մէջ միակ և ա-

<sup>1)</sup> X գիրք, 269—303 երես:

ուաջին հանդէսն է մասնագիտական, որ աշխատում է ի մի հաւաքել արդէն կորստի վտանգին ենթարկուած ազգագրական նիւթերը: Տանկալի, է որ այսուհետև հաւաքելի նիւթերն աւելի ճշտուած և լրիւ լինին:

Ա. Վ. Ղ.

«Մուրճ»-ի ներկայ տարուայ №№ 2 և 3-ում «Ազգագրական չանցիսի» I—X գրեթե մասին տպագրուած գրախօսութեան առիրով \*):

Արժ. Ա. Վ. Ղըտճեանի վերոյիշեալ մատենախօսութիւնը ոչ միայն զուրկ է անաշառութիւնից, այլև լի է խեղաթիւրումներով, և եթէ ես պատասխանում եմ մի այսպիսի գրութեան, այդ միայն այն պատճառով, որ այդ տպուած է ինձ համար համակրելի մի ամսագրում: Փաստերով ցոյց տամ ասածներս.

Արժ. Ղըտճեանը խեղաթիւրում է փաստերը: 1). Իմ «Համառօտ տեսութիւն Հայ-ազգագրութեան» յօդուածիս մէջ ես ասել եմ. «Ձեռնարկելով ներկայ հրատարակութեան՝ հարկաւոր ենք համարում մի համառօտ հայեացք ձգել հայ ազգագրութեան այն սակաւաթիւ գոհարների վրայ, որ ազատուել են ժամանակի ծախող ժամփաներից և ապա՝ «Ակսենը ուրեմն մեր տեսութիւնը, սկիզբն առնելրով գողթան երգերից ու զրոյցներից\*\*)...» իսկ յօդուածի վերջում Տես նաև Հանդիսիս առաջիկայ համարը: Սրանից միանգամայն պարզ երևում է, որ այս յօդուածը դեռ չէ ասարտուած. դեռ չասեմ, որ սրա ֆրանսիական թարգմանութեան մէջ սրա եռապատիկն է արպուած\*\*\*), որ սա միայն սկիզբն է՝ և այն էլ միայն գողթան երգերի մի երրորդը, մինչդեռ արժ. Ղըտճեանը այս ցոյց է տալիս ընթերցողին իբր հայ-ազգագրութեան ամբողջացած տեսութիւն և դիտողութիւններ է անում, որ մեզ համար գոյութիւն չունին... Սրուանձտեան, Շերենց, Գ. Հախվերդեան և մի շարք անուններ \*\*\*\*), Աբովեանի և Պը-

\*). Ցպագրում ենք այս յօդուածը՝ հաւատարիմ լինելով ասձետար et altera pars սկզբունքին, մանաւանդ որ Ա. Վ. Ղ. -ի քննադատութեան փաստական կողմը թողել էնք իրա հեղինակի պատասխանատութեան:

Ե. Խ.

\*\*). Ազգ. Հանդ., I., եր. 7.

\*\*\*). La Revue des tradit ious Populaires, 1895, №№ 4, 5, 6 և 7:

\*\*\*\*). Այ անունները աւելի լիակատար յիշուած են պ. Գ. Խոլաթեանի «Ծրագիր հայ ազգագրութեան» գրքի վերջին երեսում, այն ծրագրի, որի մասին մինքան յայտարարել ենք՝ որպէս մի անհրաժեշտ ուղղեցոյց (Ազգ. Հանդ., I. գ. եր. 379. և II, III գրքեր):